Հաստատում եմ՝

Տնօրեն՝ / Ա. Բրուտյան /

_31 _օգոստոսի_ 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր
## Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց
## I ա դասարան
## Դասվար՝ Լուսիկ Հովիկի Բարսեղյան
## 2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (**դասարանի ընդհանուր բնութագիրը**)- I ա դասարանում սովորում է 24աշակերտ,որից 11-ը՝ տղա է,13-ը՝ աղջիկ:Դասարանում կան տարբեր խառնվածքի երեխաներ:Աշխատանք է տարվում ամուր հիմքերի վրա դնել դաստիարակչական և կրթական խնդիրները: Հիմնական ուշադրությունը սևեռելու եմ առողջ և ամուր կոլեկտիվի ստեղծմանը: Սերմանելու եմ միմյանց նկատմամբ բարի և հարգալից վերաբերմունքի ձևավորում:

**2.ՈՒսումնական-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս տարվա ընթացքում**- Մշտապես պետք է հետևել ուսման բավարար պայմանների ապահովմանը: Կրթել և դաստիարակել սերունդ մեր պետականության ամրակայման և զարգացման հայեցակարգին համապատասխան: Պետք է առաջնորդվել ուսուցման և դաստիարակության մեթոդների համակարգված և միահյուսված սկզբունքով: Ստեղծել համերաշխ կոլեկտիվ, սերմանել փոխադարձհարգանք մեծերի նկատմամբ:Կանխել բացակայությունները ( եթե դրանք անհիմն են ) և առավոտյան ուշացումները:Դաստիարակել սեր,ուշադրություն,հարազատ դպրոցի,թաղամասի,քաղաքի,հայրենիքի հանդեպ:Դաստիարակչական այս կամ այն խնդիրն իրագործելու համար պետք է ապահովված լինի ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա առողջ հարաբերությունները: Պետք է բացառել սովորողի նկատմամբ ավանդական ներգործությունը: Պետք է հաշվի առնել նրանց տարիքային առանձնահատկությունները:

## 3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1**Հոգևոր դաստիարակություն** - Հաճախակի զրույցների միջոցով հասնել աշակերտների մեջ հոգևորի կարևորության գիտակցմանը: Տեղեկացնել,որ գիտելիքը մնայուն և անկողոպտելի գանձ է,որ կյանքի դժվարությունները հեշտ է հաղթահարում գիտելիքով զինված մարդը: Ծանոթացնել մեր ժողովրդի հոգևոր արժեքներին:

3.2**Գեղագիտական դաստիարակություն** – Աշակերտների մեջ դաստիարակել էսթետիկական ճաշակ,գեղեցիկը ընկալելու ունակություններ:Աշակերտներին ներկայացնել գեղագիտության կանոնները ,գեղեցիկ հագնվելու, հարդարվելու, խոսելու, բարեկիրթ պահվածքի կարևորությունը: Ծանոթացնել արվեստի տարբեր ճյուղերին:

3.3**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն** - Զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնել մեր հայրենիքի պատմական անցյալին,մեր ազգի հերոսներին նրանց կատարած սխրանքներին: Դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ: ՈՒսուցանել ՀՀ դրոշի, զինանշանի և օրհներգի պատմությունը:

3.4**Ֆիզիկական դաստիարակություն** - „Առողջ մարմնում առողջ ոգի,,այս առաջաբանով դաստիարակել աշակերտների մոտ սեր դեպի ֆիզիկական կուլտուրան: Ուշադրություն դարձնել դասի ժամանակ աշակերտների կեցվածքին,նստելաձևին:Անվանի մարզիկների օրինակով ձգտում առաջացնել որևէ սպորտաձևով պարապելու: Ընդգծել մաքուր օդում լինելու, ռեժիմով սնվելու կարևորությունը:

3.5**Աշխատանքային դաստիարակություն** - Տարրական դասարանում դաստիարակել աշխատասիրություն,հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ:Մեծ ուշադրություն դարձնել տարբեր մասնագիտությունների առանձնահատկությունների ծանոթացմանը: Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցի բակի մաքրմանը: Ամեն մի գործ պիտի կատարվի պատվով ու նվիրումով: Չկա վատ աշխատանք:

3.6**Բնապահպանական դաստիարակություն** –Երեխաների մեջ դաստիարակել սեր բնության,կենդանիների և թռչունների նկատմամբ: Երեխաներին բացատրել, որ միջավայրի վիճակից են կախված մարդու առողջությունն ու տրամադրությունը: Չպետք է վնասել բնությունը,այն չպետք է աղտոտել: Հաճախակի պետք է շրջել դպրոցամերձ այգում, լինել բնության գրկում:

4.**Դպրոց-ընտանիք կապը** - Միասնական խնդիրների մշակում ողջ ուստարվա ընթացքում: Կազմակերպել ծնողական ժողովներ, տեղյակ պահել դպրոցի հիմնախնդիրներին: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական միջոցառումներին:Ակտիվացնել և պահպանել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը: Ճիշտ կազմակերպել ծնողկոմիտեի աշխատանքը:

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| **Ուսումնական շաբաթ** | **Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը** | **Կատարման ժամկետ** | **Կատարողներ** |
|---|---|---|---|
| 1-ին շաբաթ | Զրույց նոր ուսումնական տարվա անելիքների մասին:Դասագրքերի բաշխում,տետրերի հավաքում: | Սեպտեմբեր | Դասվար |
| 2-րդ շաբաթ | Ծանոթացում դասացուցակին և վարքի կանոններին: Զրույց,,Մեր հիգիենան,,: | | Դասվար,բուժքույր |
| 3-րդ շաբաթ | Դասասենյակի կահավորում: Ծնողկոմիտեի կազմի ընտրություն: | | Դասվար |
| 4-րդ շաբաթ | Զրույց՝,,Իմ Հայաստան,,թեմայով: | | |
| 5-րդ շաբաթ | Զրույց՝,,Իմ ուսուցիչը,, : | Հոկտեմբեր | Դասվար,ծնողներ |
| 6 –րդ շաբաթ | Զրույց՝,,Ի՞նչն է լավ,ի՞նչն է վատ,, թեմայով: | | Դասվար |
| 7-րդ շաբաթ | Կազմակերպել փոքրիկ ցերեկույթ ,,Մրգահանդես,, | | Դասվար |
| 8-րդ շաբաթ | Ի՞նչ է անձնական հիգիենան,պետք է միշտ լինել մաքուր և կոկիկ: | | Դասվար,բուժքույր |
| 9-րդ շաբաթ | Ստեղծել ,,Ոսկե աշուն ,, անկյուն:Հավաքել տարբեր գույնի տերևներ: | Նոյեմբեր | Դասվար |
| 10-րդ շաբաթ | Զրույց՝ նվիրված գեղեցիկին ու բարուն: | | Դասվար |
| 11-րդ շաբաթ | Զրույց՝ ,,Իմ ծննդավայրը ,, , ,,Իմ տունը ,, թեմայով: | | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 12- րդ շաբաթ | Զրույց՝,,Իմ շրջապատի մարդիկ ,, թեմայով: | | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 13-րդ շաբաթ | Աղջիկների և տղաների հարաբերությունների քննարկում: | Դեկտեմբեր | |
| 14- րդ շաբաթ | Ինչ եմ ուզում դառնալ | | Դասվար |
| 15-րդ շաբաթ | Ինչպես վարվել բնական աղետների ժամանակ(երկրաշարժ ) | | Դասվար,ուս. գծով փոխտնօրեն |
| 16-րդ շաբաթ | Ամանորյա հանդես: | | Դասվար |
| 17-րդ շաբաթ | Զրույց աշակերտի վարքի,կուլտուրայի,վարվեցողության վերաբերյալ | Հունվար | Դասվար,ուս. գծով փոխտնօրեն |
| 18-րդ շաբաթ | Զրույց ֆիզկուլտուրայի և սպորտիմասին ,,Իմ սիրած սպորտաձևը,, թեմայով: | | Դասվար, ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 19-րդ շաբաթ | Զրույց անձնական հիգիենայի մասին: | | Դասվար, բուժքույր |
| 20-րդ շաբաթ | Զրույց ,,Ինչ է պատասխանատվությունը,, | Փետրվար | Դասվար |
| 21-րդ շաբաթ | Սեփական արարքների գնահատում | | Դասվար |
| 22-րդ շաբաթ | Զրույց ,,Իմ ընտանիքը,, | | Դասվար |
| 23-րդ շաբաթ | Գիրքը մեր կյանքում | | Դասվար,գրադարանավարուհի |
| 24-րդ շաբաթ | ,,Իմ սիրելի մայրիկ,, դաս միջոցառում | Մարտ | Դասվար |
| 25-րդ շաբաթ | Բնական աղետներ՝ջրհեղեղ, հրդեհ,սողանք | | Դասվար |
| 26-րդ շաբաթ | Այբբենարանի հանդես | | Դասվար |
| 27-րդ շաբաթ | Մեր ընտանեկան պարտականությունները | Ապրիլ | Դասվար |
| 28-րդ շաբաթ | Ճանապարհայիներթևեկության կանոնները | | Դասվար |
| 29-րդ շաբաթ | Օգնում ենք արդյոք ծնողներին: | | Դասվար |
| 30-րդ շաբաթ | Ամառվա անելիքները : | | Դասվար |

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| **Դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն ) բովանդակությունը:** |
|---|
| Համադպրոցական միջոցառում նվիրված գիտելիքի օրվան: |
| ,,Իմ Հայաստան,,դաս միջոցառում |
| Զրույց ,,Իմ ուսուցիչը |
| Կազմակերպել էքսկուրսիա բնության գրկում ,,Աշունը մեր քաղաքում ,,: |
| Ամանորյա հանդեսի նախապատրաստում: |
| Զրույց՝ ,,Մեր հզոր բանակը ,,: |
| Ձմեռային խաղերի կազմակերպում դպրոցամերձ հրապարակում: |
| Ցերեկույթ՝,,Մայր իմ անուշ ու անգին ,, |
| Լավագույն բացիկի մրցույթ |
| Այբբենարանի հանդես |
| Սանիտարական օր |
| Զրույց ,,Մայիսը հաղթանակների ամիս,,: |
| Էքսկուրսիա բնության գրկում |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| **Քննարկվող հարցեր** | **Ժողովի համառոտ բովանդակությունը** |
|---|---|
| Կազմակերպչական հարցեր | 1Ծանոթանալ ծնողների հետ 2.Ծնողներին տեղեկացնել նոր ուս.. տարվա անելիքներին: 3.Պահպանեն հիգիենան: 3.Խնամքով օգտագործեն դասագրքերը |
| Կազմակերպչական հարցեր ՈՒս. Տարվա աշխատանքներ: | 1.Ընտրել ծնողկոմիտե<br>2.Ծանոթացնել 2022-2023ուստարվա աշխատանքներին |
| Հիգիենան դպրոցում և տանը | Աշակերտների արտաքին տեսքի, մաքրության մասին հարցերի քննարկում |
| Կազմակերպչական հարցեր | Քննարկել երեխաների վարքը դպրոցում և տանը:Կարևորել օրվա ռեժիմի ճիշտ բաշխումը: |
| Առաջին կիսամյակի ավարտ: | ՈՒս. տարվա առաջադիմության արդյունքների քննարկում: |

| | |
|---|---|
| Երկրորդ կիսամյակի սկիզբ: | Մշակել համատեղ պլան ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ անցկացնելու համար |
| ՈՒսուցման ընթացքում տեղ գտած թերացումները և համատեղ ուժերով կատարվե լիք արդյունավետ աշխա- տանքները: | Ծնողների ներգրավվումը ուսուցման պրոցեսում: |
| Ինչպես պատրաստվել Այբբենարանի հանդեսին | Ծնողների ներգրավվումը դահլիճի ձևավորման գործընթացում: |
| 2022-2023ուս. տարվա ավարտը և հետագա անելիքները: | Ծանոթացում ամառային արձակուդների ընթացքում կատարվելիք աշխատանքներին |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| **քննարկվող հարցեր** | **զրույցի համառոտ բովանդակություն** |
|---|---|
| Աշակերտների առաջադի մության և վարքի կանոն ների մասին: | Յուրաքանչյուր ծնող պարտավոր է Հետևողական լինել իր երեխայի առաջադիմության և հիգիենայի հարցում: |
| Ձևավորել առողջ մթնոլորտ | Երեխաների մեջ ամրապնդել սեր և հարգանք միմյանց նկատմամբ |
| Ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը | Ապահովել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը և կարևորել այդ կապի անհրաժեշտությունը ուսումնական պրոցեսում: |
| Ինչպես պահպանել դպրոցական գույքը | Երեխաների մեջ ամրապնդել պատասխանատվություն դպրոցական գույքի նկատմամբ: |

## ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

**Նախագահ՝** Ղարիբյան Կարինե
**Անդամներ՝** Սահակյան Արմինե
**Անդամներ՝** Սուքիասյան Ինա

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

| **քննարկվող հարցեր** | **Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը** |
|---|---|
| Ինչպես մասնակցել դպրոցի Վերանորոգման աշխատանք-ներին:Աշխատանք տանել աշակերտների հիգիենայի և վարքի կանոնների ուղղութ յամբ: | Ինչպես կազմակերպել աշխա-տանք մաքուր և կոկիկ արտա-քին ունենալու ուղղությամբ: |
| Ծանոթացում դպրոցում կատարվելիք աշխատանքներին | Կարևորել ծնողի ակտիվ մասնակցությունը դպրոցում կատարվելիք աշխատանքներում: |
| Միջանձնային հարաբերությունների քննարկում | Դաստիարակել սեր և բա-րիություն դիմացինի նկատ-մամբ: |
| ՈՒսուցման ընթացքում տեղ գտած թերացումները և համատեղ ուժերով կատարվե լիք արդյունավետ աշխա-տանքները | Ծնողների ներգրավվումը ուսուցման պրոցեսում |

## ԴԱՍՎԱՐԻ ԺԱՄ

| **Աշխատանքի բովանդակությունը** |
|---|
| Զրույց՝,,Նոր ուսումնական տարին ,,: |
| Մեր հիգիենան: |

| |
|---|
| Իմ անկախ Հայաստան: |
| Զրույց՝ ,, Ճանաչում եմ ինքս ինձ,,: |
| Զրույց՝,, Իմ ուսուցիչ,,: |
| Զրույց՝ ,,Ինչն է լավ ,ինչն է վատ,,: |
| Զրույց՝ ,,  Ինչ գիտեմ հայրենիքիս մասին,,: |
| Զրույց՝ ,,Իմ ծննդավայրը ,,: |
| Զրույց՝ ,, Իմ շրջապատի մարդիկ,,: |
| ,,Աշունը մեր քաղաքում,, էքսկուրսիա բնության գրկում: |
| Աղջիկների և տղաների հարաբերությունների քննարկում: |
| Ընթացիկ առաջադիմության վերլուծություն: |
| Թղթի մակուլատուրայի հավաքում: |
| Ամանորյա հանդեսի կազմակերպում: |
| Ինչպես անցկացրի ձմեռային արձակուրդը |
| Զրույց՝ ,,Ինչ եմ ուզում դառնալ ,,: |
| Զրույց՝ ,, Մեր հզոր բանակ,,: |
| Զրույց՝,,Խաղաղություն ենք ուզում,, |
| Ինչպես պաշտպանվել բնական աղետներից; |
| Մեր դասարանի կանոնները: |
| Մայր իմ քնքուշ ու բարի |
| Զրույց՝,,Աշակերտը և դպրոցը,, |
| Զրույց՝,,Ինչ տվեց ինձ դպրոցը,, |
| Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդը |